

COVID-19 պատվաստանյութ և հղիություն

Դուք հղի՞ եք կամ պլանավորում եք հղիանալ: COVID-19 պատվաստանյութերն անվտանգ են և պաշտպանում են ձեզ և ձեր երեխային վարակի դեմ:¹

Եթե դուք հղի եք, ապա հավանականությունը մեծ է, որ COVID-19-ով վարակվելիս այն ավելի ծանր կտանեք

Հղիները՝ ի տարբերություն մյուսների, գտնվում են COVID-19-ով առավել ծանր վարակվելու հավանականությունն ունեցող ռիսկային խմբում:

Եթե դուք վարակվեք COVID-19-ով, դա կարող է բարդացնել ձեր հղիության ընթացքը

Հղիները, որոնք վարակվում են COVID-19-ով, հայտնվում են հղիության բարդացման բարձր ռիսկային խմբում և կարող են բախվել այնպիսի խնդիրների, ինչպիսիք են արյան բարձր ճնշումը, արյան մակարդեղիության խանգարումը, մահը և մահաձեռնությունը:

Եթե դուք հղի եք, դուք կարող եք ստանալ COVID-19 պատվաստանյութը

ԱՄՆ-ում կիրառման թույլտվություն ունեցող COVID-19-ի դեմ առկա երեք պատվաստանյութերից որևէ մեկը կարող են ստանալ հղիները կամ կրծքով կերակրողները: Ներկա պահին Կալիֆորնիայում հասանելի պատվաստանյութերի մասին տեղեկատվություն ստանալու համար այցելեք [հմացեք պատվաստանյութերի մասին](#) բաժինը:

Ձեր երեխային պատվաստելով կորոնավիրուսային վարակի դեմ՝ նրան որոշ չափով կպաշտպանեք COVID-19-ից

Վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պատվաստված հղիները հակամարմիններ են փոխանցում իրենց որովայնում զարգացող պտղին, և երեխան ծննդյան առաջին իսկ օրից ունենում է որոշակի պաշտպանվածություն:²

COVID-19 պատվաստանյութերն արդյունավետ են

Այս պատվաստանյութերն իրենց մեջ ներառում են թույլատրելի քանակությամբ վիրուս, դա այնքան քիչ է, որ վարակ չի առաջացնում, սակայն օրգանիզմում առաջացնում է իմունային պատասխան, ինչն էլ դրդում է օրգանիզմին պաշտպանիչ հակամարմիններ ստեղծել: Այս պատվաստանյութը չի պարունակում կենդանի վարակ, ուստի և չի կարող որևէ մեկին վարակել կորոնավիրուսային հիվանդությամբ: Բոլոր երեք պատվաստանյութերը բարձր պաշտպանիչ դեր ունեն:³

COVID-19 պատվաստանյութերը պաշտպանիչ դեր են կատարում ձեզ և ձեր երեխայի համար

CDC-ն ուսումնասիրել է 35,000 մարդու, որոնք պատվաստվել են հղիության ընթացքում կամ անմիջապես հղիությունից առաջ: Այս ուսումնասիրությունը հիմք ընդունելով և հաշվի առնելով պատվաստանյութերի և նրանց բաղադրիչների կատարած հայտնի աշխատանքը, հետազոտողները կորոնավիրուսային հիվանդության դեմ հղիների պատվաստման համար որևէ հակացուցում չեն գտել:

Այլ նկատառումներ հղիության ընթացքում կատարվող պատվաստումների վերաբերյալ

Ինչպես բոլորի, այնպես էլ հղիների մոտ, COVID-19 դեմ պատվաստանյութը ստանալիս կարող են ի հայտ գալ կողմնակի ազդեցություններ, ինչպիսիք են մարմնի ցավը, դողը և հոգնածությունը:

Դրանք նորմալ են բոլորի համար: Խորհրդակցեք ձեր բժշկի հետ կողմնակի ազդեցության ցանկացած տեսակի շուրջ:



Լրացուցիչ տեղեկություն

Այցելեք այս փաստաթուղթը CDPH-ի կայքէջում

¹Կարդացե՛ք մեր [Ուղեցույց՝ հղիության ժամանակ պատվաստման վերաբերյալ](#) ամբողջությամբ:

²Տե՛ս CDC-ի [COVID-19 պատվաստանյութերը հղիության կամ կրծքով կերակրելու ժամանակ](#) բաժինը:

³Տե՛ս [հմացեք պատվաստանյութերի մասին](#) բաժինը:

